# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԼԵԶՈՒՆ  ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մարդը իր ողջ էությամբ ու գոյության ներքին մղումներով, ազդակներով ու իմաստով կոչված է ստեղծել, արարել մշակույթը:Մարդը մշակութաստեղծ էակ է:





Մշակույթի առաջացման ,
զարգացման ու պահպանման
միակ պայմանը
հասարակությունն է:
Անգնահատելի է մշակույթի
դերը հասարակական ու
մարդկային
հարաբերությունների,
բարեկրթության,
ավանդույթների , արժեքների
ստեղծման, մշակման,
զարգացման ու
արդիականացման գործում:



Մշակույթն իր էությամբ, կազմավորման հիմքով ու արտահայտման որոշ առանձնահատկություններով էթնիկ, ազգային երևույթ է: Մշակույթը ստեղծվում է տարբեր ազգերի ու նրանց նախորդող համապատասխան էթնիկ հանրությունների գործունեության շնորհիվ: Ազգը կազմավորվում ու գոյության իմաստ է ստանում սեփական մշակույթով: Ազգային մշակույթը նաև հատուկ մտածողություն է . լեզու, բնավորություն, հոգեբանություն՝ կազմավորված տվյալ էթնոսի ու նրա պատմության հիման վրա: Առանց մշակույթի չկա ազգ, հայրենիք ու հայրենասիրություն:



Հայկական մշակույթը հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Մշակույթի ճյուղերն են՝ լեզուն, գրականությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, նկարչությունը, պարարվեստը, թատրոնը, կինոն:



Ֆրանսիան միայն սիրո քաղաք Փարիզը չէ. նարդոսի անծայրածիր դաշտերը, հինավուրց պատմությունը, մշակութային հազարավոր արժանները, հիասքանչ լեզուն ամբողջական են դարձնում Ֆրանսիան:



Անգլիայի մշակույթը հարուստ է և բազմազան: Բազմաթիվ գործոններ են ազդել մշակույթի վրա՝ կղզիական բնույթի պետություն լինելը, պետության պատմությունը որպես արևմտյան դեմոկրատիայի առաջատար և ռազմաքաղաքական նշանակալից երկիր:Անգլիացիների կենցաղում պահպանվել են ավանդական շատ սովորույթներ, զանազան ծիսական արարողություններ: Բնակարանները երկհարկ են՝ միմյանց հետ ներքին աստիճանասանդուղքներով կապված, սենյակների ուղղահայաց դասավորությամբ: Տարածված է բուխարիկը, օգտագործում են յուրատեսակ ուտեստներ, հագուստ և այլն: Անգլիան մարզական շատ խաղերի (ֆուտբոլ, բասկետբոլ, թենիս և այլն) հայրենիքն է: Հարուստ է նաև անգլիացիների բանահյուսությունը:

# Հայաստանի մշակութային կոթողները





